

## Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ

(ավազանի անունը՝ Արամ)

Ծնվել է 1981 թ. մայիսի 15-ին Երևան քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է մայրաքաղաքի Լեոյի անվան թիվ 65 միջնակարգ դպրոցում:

1997-2002 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2003 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո Վեհափառ Հայրապետի գավազանակիր-գործավարն է:

2002 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «*Ամ* և *Է* նախդիրների իմաստային առումները ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին» մատյանի» թեմայով:

2002 թ. օգոստոսի 31-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: